## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3


"08" դեկտեմբերի 2022թ. N 3351-Ա

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻՑ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի <<Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման կարգը հաստատելու մասին>> N 1587-Ն որոշմամբ հաստատված պահանջներով և հիմք ընդունելով գնահատման թերթիկները՝

## ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքից միջպետական ավտոբուսային կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող Հայաստանի Հանրապետության փոխադրողների ընտրության 2022 թվականի նոյեմբերի 22-ին կայացած մրցույթի արդյունքները՝ ըստ գնահատման ամփոփ թերթիկի՝ համաձայն հավելվածի:

2. <<Երևան-Թեհրան>> միջպետական երթուղու սպասարկման համար 60.3 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել <<Էլիտբաս>> ՍՊ ընկերությանը՝ <<Հիգեր>> մակնիշի 200 QQ 62, 200 TT 62, 200 RR 62, 200 GG 62 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման չորս տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 20000 դրամ փոխադրավարձով:

3. <<Երևան-Թեհրան>> միջպետական երթուղու սպասարկման համար 51.3 ընդհանուր միավորով, որպես հայկական փոխադրող, հաղթող ճանաչել <<Արկա Քարս>> ՍՊ ընկերությանը՝ <<Մերսեդես բենց>> մակնիշի 881 ZZ 88 հաշվառման համարանիշի, <<Նեոպլան>> մակնիշի 881 RR 88, 881 CC 88 հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներով՝ սահմանելով սպասարկման երեք տարի ժամկետ, մեկ ուղևորի համար 15000 դրամ փոխադրավարձով:

4. Ստացած 47 միավորով <<Տաթև SSS>> ՍՊ ընկերությանը <<Երևան-Թեհրան>> երթուղով ՀՀ փոխադրողի ընտրության մրցույթի արդյունքում հաղթող չճանաչել:

5. Հայաստանի Հանրապետության տարածքից ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների և ուղեբեռների միջպետական փոխադրումների իրականացման 2007 թվականի դեկտեմբերի 27-ի 1587-Ն ՀՀ կառավարության որոշման 26 կետի 2-րդ ենթակետի համաձայն չթույլատրել <<Ուրարտու-28>> ՍՊ ընկերությանը <<Երևան-Թեհրան>> երթուղով ՀՀ փոխադրողի ընտրության մրցույթին մասնակցել:

6. <<Երևան-Մոսկվա>>, <<Երևան-Եկատերինբուրգ>>, <<Երևան-Կալուգա>>, <<Երևան-Սարատով>>, <<Երևան-Սարատով–Սամարա-Կազան>>, <<Երևան-Նիժնի Նովգորոդ>>, <<Տվեր-Երևան>>, <<Երևան-Սոչի>>, <<Երևան-Դոնի Ռոստով>>, <<Երևան-Օրենբուրգ>>, <<Երևան-Սանկտ Պետերբուրգ>>, <<Երևան-Սամարա>>, <<Երևան-Կրասնոդար>> միջպետական երթուղիների սպասարկման համար հայտեր չեն ներկայացվել, հետևաբար երթուղիների մրցույթը չի կայացել:

7. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ Խ. Սողոմոնյանին՝ ապահովել ՀՀ փոխադրողների ընտրության մրցույթի ՀՀ կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1587-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին համապատասխան հայտարարումը:

8. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Արմեն Սիմոնյանին:

12/8/2022

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

**ՆԱԽԱՐԱՐ՝** Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ. ՍԱՆՈՍՅԱՆ**

**ք. Երևան**

Ձև № 7

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարի
« 08 » դեկտեմբերի 2022թ.
N 3351-Ա հրամանի

# Գ Ն Ա Հ Ա Տ Մ Ա Ն   Ա Մ Փ Ո Փ - Թ Ե Ր Թ Ի Կ

22 նոյեմբերի 2022թ.
(մրցույթի անցկացման օրը)

| [1]Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը | Գումարային գնահատականը | | | |
|---|---|---|---|---|
| | ներկայացված ավտոտրանսպորտի | վարորդների աշխատանքային փորձի | խախտումների առկայության | ընդամենը |
| <<Արխիս Քարտ>> ՍՊԸ | << Երևան - Ծաղկաձոր >> | | | |
| | 36.3 | 7 | 8 | 51.3 |
| <<Տարոն ՏՏՏ>> ՍՊԸ | << Երևան - Ծաղկաձոր >> | | | |
| | 31 | 8 | 8 | 47 |
| <<Էլիտրանս>> ՍՊԸ | << Երևան - Ծաղկաձոր >> | | | |
| | 34.5 | 6.3 | 20 | 60.8 |

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

(ստորագրություն)

Խաչիկ Սողոմոնյան
(անունը, ազգանունը)